




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

351.81

2-99

313

31 MAR 2

351.81
2-99
uv

167

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԳՈՐ-
ԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ
ՄԱՍԻՆ

15994



351.81
2-99

ԹԻՓԼԻՍ — 1925 թ.

39.532

14 JUN 2013

«Հաստատվում է 23/XI—25 ք. Խ. Ե. Ս. Փոստի յեզ Զեռագրի՝ Փողովրդական Կոմիսարի Լիազորի Կամաբառով»:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Փոստային առաքումների ընդունումն

1. Գյուղական նամակատարը ընդունում է և տալիս է հետևյալ փոստային առաքումները — հասարակ նամակներ, բացիկներ, բանդերոններ, լրագիրներ, պատվիրած առաքումներ, զրամական փոխադրումներ, զրամական նամակներ և սակավաքաշ ծանրոցներ:

2, Նամակատարը նշանակված մարշրուտի բոլոր գյուղերում փոստային առաքումների ըն-

Главлит № 1933.

Тифлис.

Тираж 500.

Թիֆլիս Ժ.Տ.Գ.Ն.Պոլիգրաֆ բաժնի 4-րդ տպ. Պուշկ. փ.3.

դռնելն ու տալը կատարուի ե փոստային ձեռնարկի վարիչի ռահմանած որերին և ժամերին՝ փոստի յերթևեկության ժամկարգի համապատասխան:

3. Նամակատարն փոստային առաքումն ընդունելու համար՝ իր ստորագրությամբ անդորրագիր ե տալիս մատուցանողին ձև № 1 անդորրագրային մատյանից, վրան փոստային ձեռնարկի կնիքը խփած: (Անդորրագրային մատյանը տալու՝ նրա բոլոր անդորրագրերի վրա խփվում ե կնիքը, տես առդիր № 1):

4. Վորովհետև նամակատարը կարող ե չիմանալ գոյություն ունեցող բոլոր սակագները, մանավանդ փոխադրումների և ծանրոցների ընդունելու ժամանակ, վորոնց սակագները վորոշելու համար պետք ե ղեկավարվել տարածությունների աղյուսակներով, (նույնը պետք ե ասել և այն առաքումների նկատմամբ, վորոնց ճիշտ քաշը վորոշելու կարիք կա), ուստի այդ առաքումները ընդունելու ժամանակ՝ նամակատարը տուրքը գանձում ե մոտավորապես, իսկ զրա ճիշտ հաշիվը կատարում ե հետ դառնալուս, յերբ անդորրագրի մեջ անում ե անհրաժեշտ ուղղումները և այդ հաստատում ե իր ստորագրությամբ:

2. Փոստերի փոխանակումն

5. Նամակատարը իր ընդունած փոստային առաքումները ստացազրով հանձնում ե փոստային ձեռնարկին կամ շարժական փոստի աշխատավորին, վորոնք այդ անդորրագրերը և ստացած առաքումները գրանցում են համապատասխան հանձնումների մատյանների մեջ. վերջիններիս մեջ կատարված ստացազրերը գծվում են խաչաձև կերպով և թողնում մատյաններում: Նամակատարը անդորրագրային մատյանը պահում ե իր մոտ, վորի անդորրագրերը ամբողջովին սպառելուց հետո, փոստային ձեռնարկին ե հանձնում, անդորրագրերի բոլոր պատճենների հետ միասին:

Յեթե փոստերի փոխանակությունը կատարվում ե յերկու նամակատարների միջև, այն ժամանակ ընդունող նամակատարը ընդունած առաքումները՝ անդորրագրային մատյանի հետ միասին գրանցում ե իր մոտ գտնված ձև № 4 տեսքում այսպես—«Ընդունված ե _____ շրջանի գյուղական նամակատար _____-ից (հիշատակել ընդունած գումարները և առաքումները) _____»

և անդորրագրային մատյանը գործադրված ան-

դորրագրերով՝ մինչև ներքակ №..... և բո-
լոր չգործադրված անդորրագրերը»։ Գրանցումը
հաստատվում է յերկու նամակատարների ստո-
րագրություններով։ Ընդունող նամակատարը այդ
փոստը հանձնում է այն փոստային ձեռնարկին,
վորտեղից ուղարկվում է փոստը ճիշտ այնպես,
ինչպես ասված է վերևում հետևյալ հանդիպումի
համար ընդունած թղթակցությունների վերա-
բերմամբ։ Անդորրագրային ժառանգը վերագարձ-
նում է առաջին նամակատարին, կատարելով
տետրի մեջ համապատասխան ստացագիրը։

Իսկ յեթե փոստերի փոխանակությունը կա-
տարվելու յե նամակատարի և մի հաստատուն
փոստային գործակալության միջև, այդ դեպքում՝
փոստերի փոխանակման կարգը կատարվում է
այնպես, ինչպես դա տեղի յե ունենում յերկու
նամակատարների միջև. սակայն այս դեպքում,
առաքումների և անդորրագրային ժառանգ
ցումը կատարվում է վոչ թե ձև № 4 տետրում,
այլ № 2 ցուցակում, վորը սահմանված է գոր-
ծակալությունների համար։ Այն ինչ՝ նամակա-
տարը փոստային գործակալությունից ընդունած
փոստը գրանցում է իր № 4 ձևի տետրում և
գործակալը հանձնում է նրան անդորրագրային
ժառանգը թղթակցությունների հետ միասին № 4

ձևի ցուցակով, վորի մեջ և ստորագրում է նա-
մակատարը։

№ 4 ձևի տետրը ծառայում է առաքումնե-
րը ստորագրությամբ նամակատարին հանձնել-
ու, այդ թղթակցությունները ցրելու և նույն-
պես ուրիշ նամակատարների ընդունած առա-
քումները փոստին հանձնելու համար։

6. Յեթե ողակային հետիոտն փոստի յեղման
կետը կայարանի փոստային ձեռնարկն է կամ
գործակալությունը, այն ժամանակ նամակատարը
շրջագայությունից վերագրանալով, իսկույն և
յետ հանձնում է այդ ձեռնարկությանը իր ընդու-
նած ամբողջ թղթակցությունը. իսկ յեթե հետիոտն
փոստի հենակետն է ձիու կամ թե հետիոտն շար-
ժական փոստկայանը, այն ժամանակ նա իր ըն-
դունած թղթակցությունը հանձնում է այդ շար-
ժական փոստի աշխատավորին, վերջինիս առա-
ջին շրջագայության ժամանակ։

7. Նամակատարը, թե իր ընդունած և թե
փոստարկից հանած հասարակ առաքումները,
լինեն նրանք փոստանիշ փակցրած, կամ առանց
փոստանիշերի, հանձնում է փոստային ձեռ-
նարկին կամ շարժական փոստի աշխատավորին,
առանց ստացագրի։

8. Թղթակցությունները, վորոնք նշանակ-
ված են ցրելու համար, փոստային ձեռնարկում

գրանցվում են վերոհիշյալ տետրեր մեջ. իսկ նամակատարը ցրում է այդ, կատարելով մատյանի նշանակված սյունյակում անհրաժեշտ ստացա-
գիրը:

3. Փոստային առաքումների տալը հասցեատու- րներին

9. Նամակատարը փոստային ձեռնարկից ստացած թղթակցությունները տանում է ցրելու հասցեատերերին իր շրջագայության բոլոր դու-
ղերը այն օրերին և ժամերին, վորոնք սահման-
ված են տեղական պայմանների համաձայն՝ հե-
տևյալ կարգով.

ա) հասարակ նամակները, փոստքարտերը, լրագրերը և հանդեսները տրվում են առանց ստացագրի.

բ) պատվիրած ու դրամական նամակները տրվում են ստացազրով անձնապես ստացողին կամ հավատարմագրի համաձայն. ստացագիրը կատարում են ծանուցազրում.

գ) փոխադրումները տրվում են ստացազրով անձնապես ստացողներին կամ հավատարմագրի համաձայն. ստացագիրը կատարվում է փոխա-
դրման տոմսի վրա.

դ) ծանուցները տրվում են ստացազրով անձնապես ստացողներին կամ հավատարմագրի

համաձայն. ստացագիրը կատարվում է ուղեկից հասցեյի թերթիկի վրա:

Ծանոթություն.— Գործակալը փոստա-
յին առաքումները ստացազրով տալիս է հաս-
ցեատերերին կամ թե հավատարմագրով մի
ուրիշին, համաձայն փոստային ընդհանուր
կանոնների, վորոնք ձևակերպված են փոստ-
գործակալությունների զործառնություննե-
րի կանոնների § § 92—95, վորոնք ներկա-
յումս տպագրվում են, ուստի առ այժմ ձեռ-
նարկի վարիչը պետք է տեղերում հրահանգ-
ներ տա այդ մասին:

10. Կրկնավճար նամակները տրվում են ա-
ռանց ստացագրի, սակայն նրա վրա նշանակած
զումարը կանխիկ կերպով դանձելուց հետո:

11. Տրված առաքումների ծանուցազրերն ու
բլանկները, ստացողների ստացազրերի հետ
միասին և նույնպես հասցեատերերից գանձած
վճարումները (կրկնավճար և այլ առաքումների)
իսկույն և յեթ վերադարձնվում են փոստային
ձեռնարկությանը կամ անմիջական կերպով և կամ
ուրիշ նամակատարի ու գործակալի միջոցով:

12. Գործակալի ընհունած առաքումներին,
վորոնք հասցեագրված են նրա շրջագայության
վայրերը, պետք է փոստանիշ փակցնել տեղա-
կան առաքումների սակագնով. այդ առաքումնե-

ըր հասցեատերերին տալու ժամանակ՝ թանաքով կամ քիմիական թրջած մատիտով փոստանիշերը պետք է խաչաձև կերպով գծել: Անդորրագրային մատյանի մեջ գրանցած առաքումները տրվում են հասցեատերերին անդորրագրի պատճենի հետևի մասում, կամ թե չե գործակալի կազմած ծանուցագրում այդ առաքման ստացողին կատարելուց հետո: Տեղական կրկնավճար նամակները տրվում են կրկնակի վճարը գանձելուց հետո, վորի արժեքով փոստանիշեր են փակցվում ձև № 4 տետրի այն յերեսում, վորտեղ գրանցվում են այդ շրջագայության ժամանակ ընդունված թղթակցությունները: Այդ փոստանիշերի վրա ձեռնարկության մեջ, խփվում է տոմարակնիքը:

13. Նամակատարը մի վորևե պատճառով՝ տեղ չհասցրած առաքումները իսկույն և յեթ վերադարձնում է ձեռնարկությանը: Յեթե ողակային հետիտոն փոստի հենակետը շարժական փոստի կայանն է, այն ժամանակ նամակատարը չցրած թղթակցությունը պահում է իր մոտ և հետևյալ շրջագայության ժամանակ հանձնում է շարժական փոստին:

14. Յեթե հասցեատերը հեռացել է, կամ չե բնակվում առաքման վրա ցուցադրած հասցեով և կամ վերջապես բոլորովին անհայտ է,

այն ժամանակ այդպիսի առաքումները իսկույն վերադարձնվում են փոստային ձեռնարկը նամակատարի ստորագրությունը՝ կատարելով համապատասխան մակագրությունը, պատվիրած և ապահովագրած առաքումների ծանուցագրերում. իսկ հասարակ առաքումների համար, նրանց ծրարի վրա:

15. Յեթե գյուղերի հետիտոն փոստի կայանների հետ կապված հասցեատերերը ցանկանան իրենց պատվիրած և ապահովագրած առաքումները ստանալ գյուղի նամակատարի միջոցով, այն ժամանակ նրանք պարտավոր են ծանուցագրի վրա համապատասխան մակագրությունը կատարել և (գործակալի) նամակատարի ձեռքով ուղարկել փոստային ձեռնարկը. նամակատարը իր հետևյալ շրջագայության ժամանակ վերցնում է այդպիսի առաքումները, իսկ ստացողները նամակատարի գալու ժամանակ, պետք է գան կայանները, վորոնց և տրվում է այդ նամակները ընդհանուր հիմունքներով:

4. Փոստային առաքումներն ուղարկելու վճարները

Փոստային սակագին (տես առանձին թերթիկում)

16. Փոստային առաքումները ուղարկելու համար արվելիք վճարումները կատարվում են

փոստանիշերով, վորոնք փակցնվում են առաքումների վրա:

17. Այն հասարակ նամակները, վորոնք մասամբ չեն վճարված, կամ բոլորովին չեն վճարված, ուղարկվում և հանձնվում են հասցեատիրոջ առանց խոչընդոտների. սակայն տալու ժամանակ, ստացողից պետք է գանձել պակասող գումարը, պատվիրած նամակի սակագնով:

18. Կարմիր բանակի կամ կարմիր նավատորմի զինվորների հասարակ նամակները, վորոնց վրա խփված կրկնեն զինվորական մասի կնիքը, պետք է ուղարկել և ցրել ձրիկերպով. սակայն յուրաքանչյուրի համար յերեք նամակից վոչ ավելի (հիմք ՍԽՀՄ Ժողկոմխորհի 1924 թվի մայիսի 19-ի վորոշումը):

19. Կարմիր բանակայինի վրա գրած նամակը կամ քարտը ուղարկվում է ձրի, յեթե հասցեում ցույց է տրված այն զինվորական մասը, վորտեղ կարմիր բանակայինն է ծառայում և նրա կարմիր բանակային կոչումը այն է՝ «Կարմիր բանակային»:

5. Փոստանիշեր, քլանկներ յեվ ապրանքներ ստանալու յեվ վաճառելու կարգը

20. Գյուղական նամակատարին առաջին անգամ փոստանիշեր, գրողմանիշեր, բլանկ-

ներ, «Կապ» գործակալության ապրանքներ ստանալու հետ միասին, տրվում է և վկայական, վորի մեջ հիշատակվում է նրան բաց թողած ապրանքի գումարը. նամակատարը այդ վկայականը պիտի պահի իր մոտ կանխավճարների հետ միասին:

21. Փոստանիշերն ու դրամանիշերն անպայման պիտի վաճառվեն իրենց վրա նշանակված գնով՝ փոստանիշային կնիք խփած փոստքարտը — 3 կոպեկ, ծանրոցներին հետևող ուղեկից հասցեն և փոխադրման տոմսը — հատը՝ 1 կոպեկ, առանց վորևե ուրիշ գանձումների. իսկ «Կապ» գործակալության ապրանքները պիտի վաճառվեն հիշյալ գործակալության ցուցադրած գներով:

22. Փոստանիշերի, բլանկների, ապրանքների և վաճառքից գոյացած դրամների կանխիկ գումարը միշտ պետք է հավասար լինի այն գումարին, վորը նշանակված է հիշյալ վկայականի մեջ:

23. Գյուղական նամակատարը փոստանիշերի, բլանկների և ապրանքների վաճառքից գոյացած դրամով ձեռք է բերում փոստային ձեռնարկում կամ շարժական փոստի աշխատավորից անհրաժեշտ, ընթացիկ փոստանիշեր, բլանկներ և ապրանքներ. ըստ վորում, նա պարտավոր է

հետևել, վոր վաճառքի համար փոստանիշերի, բլանկների և ապրանքների պակասությունն չըզգացվի:

24. Լրագիրների բաժանորդագրությունը ընդունվում է ըստ փոստային գործակալությունների այս խնդրի վերաբերյալ համառոտ կանոնների 126-ից մինչև 133:

25. Գյուղական նամակատարը այս հրահանգում չնախատեսնված բոլոր այն հարցերի պարզաբանության մասին, վորոնց վերաբերմամբ գործնականում այս կամ այն դժվարությունները կը հանդիպեն, պետք է դիմեն փոստային ձեռնարկի վարիչին, կամ շարժական փոստի աշխատավորին, վորոնք պարտավոր են այդ պարզաբանությունները կատարել բանավոր կամ գրավոր ձևով:

Շրջանի Պետի ոգնական՝ ԿՈՒՐԱՎՅԵՎ,
Փոստ-Բաժանմունքի պետ՝ ՅԱԳԱՐԵՅՇՎԻԼԻ



<< Ազգային գրադարան



NL0215450

39,532